

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

## ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(15)

ԵՐԵՎԱՆ 2017

---

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝**

**ԱՇՈՏ ՆԵՐՄԻՍՅԱՆ** - պատմական. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Առաքելյան Ս. Ա.** – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,

**Ասատրյան Ա. Գ.** - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր,

**Գասպարյան Ս. Ք.** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

**Դերձյան Հ. Մ.** - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր,

**Զաքարյան Ս. Ա.** - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

**Ղարիբյան Գ. Ա.** - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից,  
անդամ,

**Մանուչարյան Հ. Գ.** - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր,

**Մարգարյան Հ. Ա.** - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,

**Մինասյան Է. Գ.** - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

**Միքայելյան Վ. Հ.** – հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,

**Մուրադյան Ս. Պ.** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

**Նահապետյան Ռ. Ա.** - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու /Խմբ. խորհուրդ՝ Ս. Ա. Առաքելյան  
և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան -Եր: ԵՊՀ հրատ., 2017 թ.-308 էջ:

**YEREVAN STATE UNIVERSITY**  

---

**IJEVAN BRANCH**

**A K U N Q**  
**COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES**  
**NUMBER 1(15)**

**YEREVAN 2017**  

---

**YSU PUBLISHING\_HOUSE**

*Certified for publication by academic council  
of Ijevan Branch of YSU*

***EDITOR-IN-CHIEF***

**ASHOT NERSISYAN** - *doctor of historical science, professor*

***EDITORIAL COUNCIL***

**Arakelyan S. A.** - candidate of historical science, professor

**Asatryan A. G.** - doctor of art, professor

**Derdzyan H. M.** - doctor of law, professor

**Gasparyan S. K.** - doctor of philological science, professor

**Gharibyan G. A.** - doctor of economic science, professor associate member of NAS,  
RA

**Manucharyan H. G.** - doctor of political science, professor

**Marzpanyan H. A.** - doctor of economic science, professor

**Minasyan E. G.** - doctor of historical science, professor

**Mikaelyan V. H.** - doctor of psychological science, professor

**Muradyan S. P.** - doctor of philological science, professor

**Nahapetyan R. A.** - doctor of historical science, professor

**Zakaryan S. A.** - doctor of philosophy science, professor

Akunq. Collection of scientific articles/Edit.council S. A. Arakelyan and others;  
Editor-in-chief A.A. Nersisyan. – Yer. YSU publishing-house, 2017 – 308 p.

© YSU publishing-house 2017

© Author group, 2017

Հրանտ Թամրազյանի գրական պատկառելի ժառանգության մեջ մի կարևոր և ուշագրավ տեղ է զբաղեցնում 1986 թ. վերջերին հրատարակված «Բանաստեղծության հազարամյա խորհուրդը» վերնագրով գիրքը, որտեղ ընդգրկված են հեղինակի գրականագիտական ընտիր էությունները, ուսումնասիրությունները և դիմանկարները՝ նվիրված հայ բանաստեղծության դարավոր ուղուն, մեծ բանաստեղծներին և նրանց գլուխգործոցներին՝ Գրիգոր Նարեկացուց մինչև նոր ու նորագույն գրողներ՝ թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ՝ Պետրոս Դուրյան, Հովհաննես Թումանյան, Միսաք Մեծարենց, Միամանթո, Ավետիք Իսահակյան, Վահան Տեղյան ու Եղիշե Չարենց: Ըստ էության ստացվել է մեր միջնադարյան ու նոր և նորագույն գրականության մի լայն ու ընդգրկուն համայնապատկեր, որտեղ շեշտվել է մեր հիշյալ մեծերի գեղագիտությունը, մարմնավորվել հոգեկան կերտվածքն ու բանաստեղծական խառնվածքը, բացահայտվել նրանց հոգեբանական և գեղարվեստական հատկությունները: Ընդգրկելով մեր գրականության անցած դարավոր ճանապարհի տարբեր շրջաններն ու հեղինակների ստեղծագործությունը՝ Հ. Թամրազյանը դրանք միահյուսել է գրականագիտական որոշակի հայացքի, մոտեցման, քննության տեսանկյունից: Այդ իմաստով գլխավորը, որ բնորոշ է գրքում ամփոփված ուսումնասիրություններին, գեղարվեստական ստեղծագործության, մասնավորապես քնարերգության «հազարամյա խորհրդրդի», գրական գեղեցկության, բանաստեղծական հրաշք երկունքի ներքին գաղտնիքների բացահայտումն է<sup>1</sup>: Այդ բացահայտման բացառիկ մի դրսևորումն է Գ. Նարեկացուն նվիրված ուսումնասիրությունը՝ վերնագրված «Մտածումներ Նարեկացու բանաստեղծության մասին», որը մեկ տարի առաջ՝ 1985 թ., սպագրվել էր գրականագետի «Հայ քննադատություն» եռահատորյակի 2-րդ գրքում<sup>2</sup> բանաստեղծի գրական-քննադատական հայացքների քննությանը նվիրված հոդվածների հետ համատեղ մեկ ընդհանուր խորագրի տակ՝ «Գրիգոր Նարեկացի»՝ ունենալով «Նարեկացու բանաստեղծության խորհուրդը» վերտառությունը:

Ուսումնասիրության հենց սկզբնամասում Հ. Թամրազյանը բացահայտում է Նարեկացու քերթության ծննդյան առեղծվածը ու գտնում, որ բանաստեղծի ստեղծագործության ակունքներում պետք է տեսնել ազգային պատմության ապրած կորուստների ու տազնապների տառապանքը, նաև ազգային ինքնատիպ խառնվածքի առանձնահատկություններն ու հայկական ներշնչումները: Ու թեև գրականագետը ուղղակիորեն չի պարզում մեր ազգային խառնվածքի յուրահատկությունները, սակայն, կարծում ենք, որ նա այստեղ ամենից առաջ նկատի է ունեցել մեր ցեղային բնորոշ հատկանիշը, ազգային ոգու մասնահատկությունը՝ կենսասիրությունը, որը, ինչպես Արշակ Չոպանյանը կասեր, «այդ քրիստոնեական վանականության տրտմությամբը մթնցած հոգիի մեջ՝ հեռավոր առհավության ձայներուն զարթնումովը, զանի կմխտ նորեն իր ցեղին պայծառ ներշնչումին մեջ, զանի կտանի նորեն ծովուն ու երկնքին մեծ արևոտ բանաս-

<sup>1</sup> Տե՛ս **Դեմիրճյան Պ.**, Եվ դարձյալ՝ բանաստեղծության գաղտնիքը, «Գրական թերթ», Եր., 19 հունիսի, 1987:

<sup>2</sup> Տե՛ս **Թամրազյան Հ.**, Հայ քննադատություն, Գիրք Բ. 6-15-րդ դդ., Եր., 1985, էջ 87-120:

տեղծության»<sup>3</sup>: Ու եթե Նարեկացու՝ ազգային տառապանքից ծնված այդ տանջող խոհը հետագայում Հր. Թամրազյանը հայտնաբերում է Հովհաննես Իմաստասերի Ղևոնդյանց նվիրված շարականներում ու աղոթքներում, Ֆրիկի «Գանգատի» տողերում և ապա այդ ավանդույթի շարունակությունը տեսնում 19-րդ դարավերջին Հովհ. Թումանյանի գրած «Տրտմության սաղմոսներից»-ում, «ուր նարեկացիական շնչով ու նույն այս ծանր թախիծով Թումանյանը խոսում է աստծո անտարբերության, հայոց ազգի տագնապների, աղաղակների, կականի մասին»<sup>4</sup>, ապա «Մատյանի» վերջին նվագներում բանաստեղծի «անվերջ ճիգը՝ բարձրանալու դեպի լույսի ճառագայթները, կապույտ բարությունը, արևային արդարությունը», պայմանավորում է կենսասիրության հատկանիշով և այդ հատկանիշի դրսևորումը նկատում նաև պատանի Մեծարենցի մոտ (տե՛ս 46): Ու թեև, ճիշտ է, գրականագետը կենսասիրությունը, «անդուլ ձգտումը դեպի կատարյալը, լուսավոր երազները» գնահատում է որպես մարդկային հոգեբանության հավերժական գծերից մեկը, սակայն, կարծում ենք, այստեղ նա ամենից առաջ նկատի է ունեցել այդ հատկանիշի հարազատությունը մեր ազգային խառնվածքին: Ինքն է գրում. «...Նա (Գ. Նարեկացին-Վ.Ա.) ամենից առաջ հայկական երևույթ էր: Ինչպես առանց անհատականության չի կարող մեծ բանաստեղծ ծնվել, այնպես էլ առանց ազգային յուրահատուկ խառնվածքի չի կարող ծնվել մեծ բանաստեղծություն: Մենք հաճախ ենք խոսում Նարեկացու միատիկայի մասին, բայց այդ միատիկան անգամ չէր կարող բանաստեղծական ակունք լինել, եթե ներքնապես չառնչվեր ազգային խառնվածքի և հայկական ուրույն ներշնչումների հետ: Հանճարեղ բանաստեղծն ստեղծել է ազգային խառնվածքի ավելի բարդ, առեղծվածային մի երևույթ» (12):

Այն, որ Հրանտ Թամրազյանը Նարեկացու բանաստեղծության ծնունդը պայմանավորում է ազգային հատկանիշի, ազգային ոգու յուրահատկությունների ընդգծուն առանձնահատկություններով, կարծում ենք, երևան է բերում նրա գրականագիտական հայացքների կապը Իպոլիտ-Տենի գիտական մեթոդի հետ, ըստ որի, ինչպես գիտենք, արվեստի երկերը ծնող բոլոր կարգի պայմանների մեջ առանձնացվում էր երեք գլխավոր գործոն՝ ցեղ, կլիմա, ժամանակ<sup>5</sup>: Հր. Թամրազյանի հարազատությունը կուլտուր-պատմական դպրոցի մեթոդաբանությանը երևում է նրանում, որ գրականագետը Նարեկացու ստեղծագործության ծնունդը կապում է նաև այն պատմական միջավայրի ու ժամանակաշրջանի հետ, որում ապրել է բանաստեղծը: Գիտնականի գործադրած հետազոտական մեթոդի ավելությունն այստեղ այն է, որ պահելով հարցի գլխավոր տեսանկյունը՝ Նարեկացու ստեղծագործության ծննդյան առեղծվածը, նա համակողմանի քննության է առնում Հայաստանի ներկա քաղաքական վիճակը, պատմական տեղաշարժերը, սոցիալական ու կրոնական խնդրումները, ներկայացնում դրանք փոխկապակցության մեջ՝ ցույց տալու, որ մեծ բանաստեղծի ստեղծագործությունը իր հղացման ազդակները առել է նաև ազգային կյանքի տեղաշարժերից: «10-րդ դարը անցման շրջան էր ազգային կյանքում,-գրում է Հ. Թամրազյանը.-ցավագին որոնումների և վերածնության շունչը տարածվում էր ամեն ինչի, նաև հոգիների ու

<sup>3</sup> **Չոպանյան Ա.**, Երկեր, Եր., 1988, էջ 320:

<sup>4</sup> Տե՛ս **Թամրազյան Հ.**, Բանաստեղծության հազարամյա խորհուրդը, Եր., 1986, էջ 14-15: Այսուհետև այս հրատարակությունից կատարած մեջբերումների համապատասխան էջը կնշվի տեքստում՝ փակագծերի մեջ:

<sup>5</sup> Տե՛ս **Քալանթարյան Ժ.**, Հայ գրականագիտության պատմություն, Եր., 1986, էջ 334:

մտքերի վրա, նորն ասպարեզ էր գալիս բարդ որոնումներով, ծանր երկունքով, քրիստոնեական դոգմատիկան տեղի էր տալիս մեծ դիմադրությամբ: ...Երկրում ծայր էր առել աղանդավորական շարժումը... Անցումը ուներ խիստ դրամատիկ բնույթ, ինչ-որ չափով ստիպում էր վերազնահատել անցյալը և մտածել նաև գալիքի մասին, քանի որ աղանդավորությունը, որպես ահռելի մի սպառնալիք, կախված էր նրա գլխին, մյուս կողմից՝ նոր կյանքի կարիքները և հոգևոր-կենսական վերածնունդը մարդկանց օրավոր հեռացնում էր եկեղեցուց...»: Իսկ եթե եկեղեցական նվիրապետությունները դարձել էին ֆեոդալական և քաղաքական վիթխարի ուժ և խանգարում էին կյանքի վերելքին՝ ունենալով նաև նյութական շահագրգռություններ, ապա «հոգևոր նոր գործիչները, մասնավորապես վանական եղբայրությունները, ձգտում էին մոտենալ կյանքին, նվաճել ժողովրդին, մարդկանց, անել ինչ-որ բարեփոխումներ, վերացնել կրոնական բարձր պաշտոնները, հետևել հավասարության մասին աստծո պատվիրաններին: Այստեղից էլ սկիզբ է առնում նաև միստիկան, որը մարդուն անմիջական կապի մեջ էր մտցնում աստծո հետ՝ առանց եկեղեցու միջամտության» (15-16):

«Նարեկացին ապրել է այս բարդ շրջանում», - շարունակում է Հ. Թամրազյանը՝ համոզված, որ մեծ բանաստեղծը «հազար գրգիռներ է ստացել այս ոգորումներից ու հալածանքներից» (17):

Նախորդ նարեկացիագետներից շատերը ևս, որոնցից նշանավորների անունները տալիս է Հր. Թամրազյանը՝ Արշակ Չոպանյան, Մանուկ Աբեղյան, Մկրտիչ Մկրյան, ավելի կամ պակաս չափով անդրադարձել են հասարակական-քաղաքական այն միջավայրի նկարագրությանը, որում ձևավորվել ու թափ է առել Նարեկացու ստեղծագործությունը, նրանք էլ են ձգտել ցույց տալ, որ մեծ բանաստեղծի քնարերգությունը մեկուսի, չեզոք մի արժեք չէ, այն անմիջական կապ ունի ժամանակաշրջանի պատմական-հոգեբանական, հոգևոր-գեղեցկագիտական, դավանաբանական տիրապետող տրամադրությունների ու շահագրգռությունների հետ: Որքան էլ, սակայն, հեղինակավոր ու ընդունելի, այնուամենայնիվ այլոց եզրահանգումներն ու ընդհանրացումները չեն, որ դարձել են փաստարկներ Հր. Թամրազյանի համար: Իր հարցադրումներում գրականագետը ելել է բուն նյութի խոր ու բազմակողմանի ուսումնասիրությունից, ըստ էության անառարկելի, գիտական դիպուկ, բնորոշ բացահայտումներից:

Պարզելով Նարեկացու ստեղծագործության հղացման պատմական-հոգեբանական ազդակները, ժամանակաշրջանի ու միջավայրի տրամադրությունների արձագանքն ու բաբախը նրա մեջ՝ Հ. Թամրազյանը ամենին, սակայն, չի շրջանցում կամ աչքաթող անում բանաստեղծի անհատականության ու ինքնատիպ խառնրվածքի կարևոր գործոնը, որը նրա ողջ ստեղծագործության, մասնավորապես «Մատյանի» կենսական տարերքի կարևոր ազդակներից մեկն է, եթե չասենք՝ ամենակարևորը: Ու թեև, ճիշտ է, գրականագետը առանձին չի անդրադառնում Նարեկացու կենսագրությանը, բնավորության, ապրումների ու խառնրվածքի մանրամասներին, սակայն ուսումնասիրության ընթացքը ցույց է տալիս, որ գրեթե յուրաքանչյուր հարցի կապակցությամբ, արտաքին ընդհանուր ազդակներից բացի, նա ավելի հաճախ հանգամանորեն կանգ է առնում նաև բանաստեղծի կյանքի արտաքին ու ներքին շերտերի վրա, բանաստեղծության գաղտնիքների բացահայտման համար առաջնային դարձնում գրող-անհատի խոսքը, տառապանքը, խոստովանությունները:

Հր. Թամրազյանը չի ընդունում Ա. Չոպանյանի և Մ. Աբեղյանի այն կարծիքը, թե Նարեկացու կյանքը անցել է արտաքին աշխարհից կտրված, թե «իբր խնկահոտի մեջ մեծացած բանաստեղծի մեջ լեռնացել է միայն աստծո գաղափարը», և որպես թե միայն մանկության օրերի հույզերն են նրան ներշնչել ապրելու տենչանք: Եթե Չոպանյանը գտնում է, թե Նարեկացին այնքան է հեռացել աշխարհից, որ քարանձավում միայնության մեջ բոբբոքված երևակայությամբ հաղորդակից է դարձել Հիսուսի մոր՝ Աստվածածնի հետ, ապա Թամրազյանը համոզմունքով պնդում է, որ Նարեկացին «ու՛նի աշխարհիմացության գրեթե անհուն պաշարներ»։ «Մատյանը, տաղերը, «Երգ երգոցի» մեկնությունը,-գրում է նա,-ցույց են տալիս, որ նա (Գ. Նարեկացին-Վ. Ա.) շատ լավ գիտեր աշխարհն ու ժամանակը, երկրագործին ու սայլվորին, իշխանին ու կրոնավորին, տեսել է և՛ դաշտ, և՛ այգի, և՛ կին, անցել է լքված տաղավարների ու ավերակների միջով, հասու է տառապանքի և մեղքերի բոլոր ձևերին: Աշխարհից կտրված մի արեղա չէր կարող ունենալ այդքան ճանաչողական պաշարներ և այդքան խոր անհանգստություն՝ դեպի աններդաշնակ աշխարհը, մարդը, կյանքը: Նարեկացին չէր կարող ապրել սոսկ գրքային էքստազով» (17-18): Իսկ հետագա շարադրանքում, օգտվելով Չոպանյանի հայտնի գեղեցիկ խոսքից՝ թե «Նարեկացին *աստված տեսած է*»<sup>6</sup>, Թամրազյանը վերաձևակերպում է այդ միտքը՝ ասելով. «**Նարեկացին կին տեսած է**»: Այս համոզմունքը, սակայն, չպիտի գիտակցվի որպես գրականագետի հուզական տարերքի կամ, ասենք, վերլուծողի կրքոտ տրամաբանությունից բխած մի արտահայտություն: Թամրազյանը Մատյանի նորովի ընթերցմամբ ընդհանրապես բացում է Նարեկացու նրբահյուս քնարական աշխարհի դեռ չտեսնված ծայքեր, բնագրի հմուտ քննությամբ խորանում բանաստեղծի հոգեբանության մեջ, հեղինակի խոստովանություններից անում հետևություններ, ակնառու փաստարկումներով հիմնավորում իր խոսքն ու տեսակետները. «...Կինը այցելել է նրան (Գ. Նարեկացուն-Վ. Ա.) խուցի մեջ, այրի մեջ, կյանքի արահետներում,-գրում է անվանի գրականագետը:-Եվ դա մնացել է որպես հավերժական թախիծ, տանջող կարոտ, **հավիտենական ձգող մեղք** (ընդգծումը մերն է-Վ. Ա.) և դա խոր հետք է թողել նաև բանաստեղծության տողերի վրա: Հիսնամյա բանաստեղծի հրդեհված հոգու մեջ չէր կարող անցնել սոսկ վաղ մանկության և կուսակրոնության թողած զգացումների հոսանքը: Բայց նա չի բացել իր մեծ գաղտնիքը. նա կարող էր խոսել միայն այլաբանորեն, փոխաբերաբար, անուղղակի, սիմվոլիկորով, քանի որ վարդապետ-բանաստեղծի գլխին կախված էր թոնդրակյան հերձվածի մեղադրանքը կամ հենց կրոնական սովորական դոգման: Այնուհանդերձ, շատ թափանցիկ է այդ գաղտնիքը, քանի որ հենց Աստվածածնի կերպարի համար, ինչպես Վերածնության նշանավոր պատկերներում, նա բնորոշ է ընտրել կնոջը, մարմնական գեղեցկությունը և տողերի մեջ դրել երկրային մոր հուզու ջերմությունը» (28-29):

Մ. Աբեղյանը մանավանդ «Տաղ ծննդյանի» կապակցությամբ արդեն նկատել էր, որ Սուրբ Կույսի պատկերը նկարագրված է այնպես, «որ անպայման իրական կյանքի մեջ տեսածից ու զգացածից է առնված»: Սակայն եթե Աբեղյանը մի կողմից գտնում է, որ «Տաղ ծննդյանը» «իսկապես ջերմ սրտից բխած մի օրհներգություն է միայն, ուղղված առ Մ. Կույսը, որ ոչինչ այլաբանական չունի իր մեջ, իբր սեփական սիրո առարկան ի դեմս Սրբուհու երգված», ապա մյուս կողմից էլ, մի

<sup>6</sup> Չոպանյան Ա., Երկեր, Եր., 1988, էջ 300:



տեսակ կարծեք զգուշանալով, գտնում է, որ «այն սերը, որ գովում է բանաստեղծը, մի աննյութական սեր է, որովհետև երգված կույսն ինքն աննյութ է»<sup>7</sup>: Այս հարցում Մ. Մկրյանը թերևս ավելի զգուշավոր է. նա ընդամենը գտնում է, որ Նարեկացու երգած կինը իր գեղեցկությամբ «վերացական չէ, այլ կոնկրետացված է տեղական կենցաղական երանգներով»<sup>8</sup>: Եվ վերջ:

Գուցե Հ. Թամրազյանը մասամբ երկրորդում է Մ. Աբեղյանի դիտարկումը, բայց, ինչպես նկատում ենք, նա իր տեսակետի մեջ ավելի համարձակ է. Կրկնենք՝ «Նարեկացին կին տեսած է»: Թերևս հարց առաջանա՝ իսկ ո՞ր մնաց Նարեկացու առնչակցությունը կրոնական աշխարհընկալմանը: Թամրազյանը չի մերժում այդ աղերսը, դեռ հակառակը՝ նա համոզված է, որ Նարեկացին՝ որպես իր դարի զավակ, կապված է կրոնական աշխարհայեցողության հետ, իր Մատյանում «բազում ձևերով մշակում է Հոր, միածին Որդու, Աստվածածնի թեմաները», «հավատում է և՛ երկրային թագավորությանը, և՛ վերնականների զարմանալի դրախտային կյանքին, ուր մի օր պիտի աստծու որդու հետ համբառնան այս աշխարհի մարդիկ»(22): Սակայն, միևնույն է, բացատրում է գրականագետը, Նարեկացին իր ողջ տարերքով մնում է իբրև երկրային երևույթ, նրա բուն խոսքն էլ վերաբերում է երկրային գործերին. նա պատմում է իր մեղավոր կյանքի մասին, որից նաև մնացել է հավիտենական ձգող մի մեղք, «տանջող կարոտ»՝ կինը (տե՛ս 28): Ուրեմն՝ հերոսի ողջ դրաման կապված է երկրային ակունքների հետ, որի ճանաչողությունից էլ ծնվել է խոր անհանգստությունը՝ աշխարհի, մարդու, կյանքի համար, որի իմացությունից էլ նաև առաջ է եկել աշխարհային մեղքերի ու արատների մերժումը և ձգտումը դեպի լույս եզերքները, կատարյալը: Հոգեկան տառապանքը՝ ծնված մեղավոր անցյալից, հետ է մղել երկրայինը, մարմնավորը և բանաստեղծի հայացքը ուղղել առ «մարդասեր, մարդակերպ աստված»:

Իր ուսումնասիրության մեջ Հ. Թամրազյանը թերևս առաջինը նարեկացիագիտության մեջ առաջադրում է կերպավորման արվեստի հարցը Մատյանում և բացահայտում դրան առնչվող առանձնահատկությունները: «Նարեկում» ամեն ինչ, ինչպես գիտենք, առաջ է գնում սոսկ, այսպես ասենք, կենտրոնական քնարական հերոսի խոհերի և զգացմունքների ուրույն զարգացման շնորհիվ: «Երկի («Նարեկի»-Վ. Ա.) մանրամասնությունների մեջ, գրում է Մ. Աբեղյանը, -մենք տեսնում ենք ընդհանրապես հին քրիստոնյայի և մասնավորապես մենակյացի եղերերգական վիճակն իր ամբողջ պատկերով և աշխարհայեցողությամբ»<sup>9</sup>: Սակայն գլխավոր հերոսի խոսքը, ապրումները, հոգեբանական առնչություններն ու հարաբերությունները մյուս քնարական հերոսների՝ Հայր Աստծո, Քրիստոսի, Աստվածամոր, Մատանայի հետ հնարավորություն են տալիս ոչ միայն կերպավորվելու իրեն՝ կենտրոնական հերոսին, այլև հոգեբանական որոշակի, իսկ երբեմն էլ առարկայականին մոտեցող պատկերացումներ ստեղծել նրանց մասին: Կերպավորման արվեստի հետ կապված կառուցվածքային այս յուրահատկությունը «Նարեկում» իսկապես էլ բացառիկ մի գյուտ էր մեր նոր սկզբնավորվող միջնադարյան բանաստեղծության մեջ, որ նկատել է տալիս Հ. Թամրազյանը և դնում գիտական շրջանառության մեջ: Հոդվածում նորություն է նաև այն, որ առաջին անգամ Քրիստոսի կերպարը խորությամբ քննության է առնվում գեղար-

<sup>7</sup> Աբեղյան Մ., Երկեր, հատ. Գ, Եր., 1968, էջ 623:

<sup>8</sup> Մկրյան Մ., Երկեր, հատ. 1, Եր., 1987, էջ 462:

<sup>9</sup> Աբեղյան Մ., Երկեր, հատ. Գ, Եր., 1968, էջ 588:

վեստական-բարոյական տեսանկյունից: Նարեկացուն անդրադարձած գրականագետների հերթափոխում՝ մինչև Թամրազյան, իսկապես էլ ոչ ոք հանգամանորեն չի անդրադարձել Քրիստոսի կերպարին Մատյանում: Ավելի հաճախ Աստվածորդին հիշատակվել ու կարևորվել է սուսկ որպես «ամենագոր բարեխոս» (Ա. Չոպանյանի խոսքն է) բանաստեղծի համար, միջնորդ Հայր Աստծու մոտ: Մինչդեռ, ինչպես նկատում է Թամրազյանը, «Նարեկացին երկարատև նախապատրաստել է այդ կերպարը, մասնավորապես մարդկային տեսք ու խորք տալով աստծո որդու այն տառապանքին, որ նա կրել է մարդկանց մեջ, մարդկանց համար» (26): Իր հետագա խոսքում գրականագետը համոզիչ եղանակով, մեջբերված բնագրային հատվածների փաստարկմամբ ցույց է տալիս, թե ինչպես Նարեկացին, Մատյանում ստեղծելով Քրիստոսի կենսագրությունը, նրան ներկայացնում է որպես կյանքի համար ընկած նահատակի, տառապյալի ու հալածյալի, «մարդկության համար փշե պսակ ընդունած մարդու կերպար»՝ կրոնական սխեմաների մեջ նրան հաղորդելով գեղարվեստական կերպարային գունավորում: «Քրիստոսի կերպարը դառնում է դրամատիկ և հողեղեն, ստանում երկրային բնույթ» (23),-գրում է Հ. Թամրազյանը: Եվ գրականագետը ոչ միայն Քրիստոսին, այլև Աստվածամորն է ներկայացնում սրբությունների վերացական ընկալումներից դուրս՝ որպես երկրային կնոջ կերպար, որ դարձյալ ստեղծել է Նարեկացին:

Չոր, անհույզ սխեմաներից հեռու է նաև Սատանայի կերպարը: Եվ եթե նախորդներից միայն Ա. Չոպանյանն էր անդրադարձել այս կերպարին՝ բավարարվելով սակայն միայն նրա բնութագրմամբ, ապա Թամրազյանը շեշտը ավելի դնում է այդ հերոսի կերպավորման առանձնահատկությունների վրա. «Բանաստեղծը սատանայի կերպարին մոտենում է ուրույն ձևով, այսինքն՝ անուղղակի, աղետների ու չարիքների մթնոլորտի պատկերը ստեղծելու միջոցով: Նա ստեղծում է մանր ու մեծ չարիքների այն պատկերները, որոնք գալիս են սատանայից...» (34):

Գալով Մատյանի գեղարվեստական պատկերավորությանը՝ Թամրազյանը նախ այն նույնքան բարդ է համարում, որքան նրա գաղափարները, իսկ նարեկացիական պատկերային համակարգի վիթխարի ազդեցությունը հետագա հայ քնարերգության ու նաև նոր ու նորագույն բանաստեղծների մտածողության վրա բացատրում է նրանով, որ Նարեկացին իր զարմանալի սուր տեսողությամբ ընկալել է աշխարհի ամենատարբեր երևույթների այնպիսի նրբություններ ու նրանց միջև հայտնաբերել համեմատության այնպիսի եզրեր, որոնք հետագայում հաջորդների կողմից ստացել են նոր իմաստավորումներ: Կարճ ասած, ինչպես իրավացիորեն գտնում է Հ. Թամրազյանը, Նարեկացին անսահմանորեն մեծացրել է մեր բանաստեղծական խոսքի գալիք հնարավորությունները: Գրականագետի համար այստեղ սակայն գլխավորը այն է, որ բանաստեղծի ստեղծած փոխաբերական հարուստ պատկերները, հատկապես կարճ ու խտացված համեմատությունները, հաճախ էլ իրական աշխարհից առած օրինակները կուտակում են իմացական-հոգեբանական վիթխարի պաշար, օգնում վերականգնելու և ավելի խորությամբ ճանաչելու ժամանակաշրջանի բազմաշերտ պատկերը, նաև բնորոշելու տառապող բանաստեղծի հոգու նկարագիրը: Ասել է թե՛ բանաստեղծությունը Նարեկացու շնորհիվ դարձել է աշխարհի ու իրականության ճանաչողություն ու իմացություն:

Ահա այսպես խոր է զգացել Հրանտ Թամրազյանը Նարեկացու բանաստեղծական խոսքի գաղտնիքները, բացահայտել նրա քնարերգության գրեթե բոլոր օրինաչափությունները, մեկնաբանել Մատյանին առնչվող ստեղծագործական բազմաբնույթ երևույթների միջև գոյություն ունեցող փոխադարձ պայմանավորվածությունը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր ունենալ ոչ միայն բնական շնորհք, այլև ստեղծագործական մեծ փորձ, ոչ միայն բնածին տաղանդ, այլև աշխատանքային եռանդ: Ահա հատկանիշների այս համաձուլվածքի շնորհիվ է ստեղծվել այս, Վահագն Դավթյանի բնութագրմամբ՝ ինչ ասես արժեցող ուսումնասիրությունը (տե՛ս 11), որտեղ գիտությունը մոտեցել է գեղարվեստին, իսկ գեղարվեստը՝ գիտությանը:

**Բանալի բառեր**-Հրանտ Թամրազյան, Գրիգոր Նարեկացի, Մանուկ Աբեղյան, բանաստեղծություն, գրականագիտություն, Իպոլիտ-Տեն, մեթոդ, կուլտուր-պատմական դպրոց, ազգային խառնվածք, քրիստոնեություն, կենսասափրություն, միստիցիզմ, միջնադար, կերպարավորում, գեղարվեստական պատկերավորություն:

**Վաչագան Ավագյան, Գրիգոր Նարեկացին Հրանտ Թամրազյանի գնահատմամբ**-Հոդվածում ցույց է տրվում, թե ինչպես անվանի գրականագետ Հրանտ Թամրազյանը Գրիգոր Նարեկացու ստեղծագործության, մասնավորապես «Մատյան ողբերգության» երկի նորաբան մի ընթերցմամբ, բնագրի հմուտ քննությամբ բացահայտել է մեծ բանաստեղծի քնարերգության ստեղծման բազմաթիվ օրինաչափություններ, մեկնաբանել Մատյանին առնչվող ստեղծագործական բազմաբնույթ երևույթների միջև գոյություն ունեցող փոխադարձ պայմանավորվածությունը: Ակնառու փաստարկումներով հիմնավորվում է, որ Հ. Թամրազյանը առաջինն է նարեկացիագիտության մեջ առաջադրել կերպավորման արվեստի հարցը Մատյանում և պարզել վերջինիս առնչվող առանձնահատկությունները:

**Вачаган Авагян, Григор Нарекаци в оценке Гранта Тамразяна**-В статье показано, как известный литературовед Грант Тамразян искусным исследованием произведений Григора Нарекаци, в частности, его сочинения «Книга скорбных песнопений» выявил многочисленные закономерности создания лирики великого поэта, а также истолковал взаимозависимость разных творческих явлений, связанных с «Книгой скорбных песнопений». Значительными аргументами обосновывается, что Тамразян был первым из нарекациведов, кто выдвинул вопрос об искусстве воплощения образов в «Книге скорбных песнопений» и определил особенности вышеупомянутого произведения.

**Vachagan Avagyan, The evaluation of Grigor Narekatsi by Hrant Tamrazyan**-The article shows how by a skilled examination of Grigor Narekatsi's works, the «Book of Lamentations» in particular, the well-known literary critic Hrant Tamrazyan revealed a number of patterns of the creation of his poetry and explained the connection between diverse creative phenomena, related to the book. It is justified with a use of outstanding arguments, that H. Tamrazyan was the first among Narekatsi scholars to discuss the role of impersonation in the the «Book of Lamentations» and reveal the specifications related to it.